

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 9

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2018-2019 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

17 հունիսի 2019թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 24 անդամներից 17-ը (ներկայաթերթիկը կցված է):
Նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սաղյան
Գիտական քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի «Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի» ամբիոնի վարիչի մրցութային ընտրության անցկացման հարցը:
2. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

Լսեցին՝ Գիտխորհրդի նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սադյանին, ով ներկայացրեց նիստի օրակարգը, որի հիմնական հարցը «Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի» ամբիոնի վարիչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի անցկացումն է՝ համաձայն ԵՊՀ ռեկտորի № 82§1. (առ 07.05.2019թ.) հրամանի: Նա գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց, որ մրցույթին մասնակցելու համար դիմել է միայն ք.գ.թ., դոցենտ Հայարվի Մանթաշի Սիմոնյանը, ում կողմից ԵՊՀ որակավորման մանդատային հանձնաժողովին ներկայացվել են համապատասխան փաստաթղթերը: Դրական եզրակացություն ստանալուց հետո Հ.Ս. Սիմոնյանի թեկնածությունը քննարկվել է Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնում, ինչպես նաև մրցութային հանձնաժողովում: Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնը և մրցութային հանձնաժողովը երաշխավորել են նրան՝ հայտարարված մրցույթին մասնակցելու համար (ամբիոնի և մրցութային հանձնաժողովի նիստերի քաղվածքները կցվում են): Ելույթ ունեցավ նաև գիտքարտուղար ք.գ.թ. Ա. Դադայանը, նշեց, որ մրցույթին մասնակցող թեկնածուի գիտական կոչումը, աշխատանքային ստաժը և գիտամանկավարժական գործունեությունը համապատասխանում են հայցվող պաշտոնի համար ներկայացվող բոլոր պահանջներին:

Հ.Ս. Սիմոնյանը հեղինակ է 21 գիտական աշխատանքների, որոնցից 6-ը բարձր ազդեցության գործակից ունեցող գիտական հանդեսներում և 27 գիտաժողովների զեկուցման թեզիսների: Վերջին երեք տարում հրապարակել է 6 գիտական հոդված և 2 ուսումնասնաթղթական աշխատանք: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են 7 մագիստրոսական թեզեր և 15 դիպլոմային աշխատանքներ: «Դասախոսը՝ ուսանողի աչքերով» վերջին երկու տարում սոց. հարցման միջին միավորը կազմում է 4.89:

Առաջարկվեց Հ.Ս. Սիմոնյանի թեկնածությունը ներառել քվեաթերթում՝ Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչի թափուր տեղի համար հայտարարված մրցույթի փակ գաղտնի քվեարկության անցկացման համար:

Բաց քվեարկությամբ գիտական խորհուրդը (միաձայն) որոշեց մրցույթի մասնակից Հ.Ս. Սիմոնյանին երաշխավորել Ֆարմքիմիայի և

Ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրվելու համար և նրա անունը մտցնել փակ գաղտնի քվեարկության քվեաթերթի մեջ:

Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելու համար որոշվեց ընտրել հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով.

Նախագահ՝ Բ.Գ.Պ. Ռ.Ա. Հովհաննեսյան

անդամներ՝ Բ.Գ.Թ. Ս.Հ. Ափոյան

ուսանող՝ Ա.Ա. Համբարձումյան:

Ընտրություններից հետո Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհրդի անդամները (24-անդամներից ներկա էին 17-ը) լսեցին հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունն, ըստ որի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցել են գիտխորհրդի 17 անդամներ: Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչի պաշտոնը զբաղեցնելու համար Հ.Մ. Սիմոնյանին կողմ են քվեարկել գիտխորհրդի 17 անդամ, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթ՝ 0:

Որոշեցին՝ Գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ որոշեց հաստատել հաշվիչ հանձնաժողովի հաշվետվությունը և Հ.Մ. Սիմոնյանին համարել ընտրված Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչի պաշտոնում:

2. Ընթացիկ հարցեր:

Նիստում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝
տնօրենի պաշտոնակատար,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, Բ.Գ.Պ, պրոֆ.

Ա. Սադյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ Բ.Գ.Թ.

Ա. Դադայան